«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
գործադիր տնօրեն Ա. Գևորգյան
«18» հուլիս 2023թ.

# Հայաստանի տղամարդկանց 84-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարի

# Կանոնադրություն

***Անցկացման վայրը***՝ ք. Երևան, Շևչենկո 34, Հայաստանի շախմատի ակադեմիա
***Ժամկետները***՝ օգոստոսի 19-ից օգոստոսի 31-ը
***Մրցակարգը***՝ շրջանային մրցակարգ
***Ժամակարգը***՝ յուրաքանչյուր մասնակցին 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:
Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը՝ 30 րոպե տուրի մեկնարկից
***Լրացուցիչ ցուցանիշներ***՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի
2. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
3. անձնական հանդիպման արդյունքի
4. հաղթանակների առավելագույն քանակի

1-3-րդ տեղերը գրված շախմատիստները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի տղամարդկանց 2024թ. բարձրագույն խմբի մրցաշարին:

Մրցաշարի ընթացքում մարզերը (30կմ. և ավել) ներկայացնող մարզիկները կապահովվեն սնունդով և գիշերավարձով:
Նրանց ճանապարհածախսը, ինչպես նաև ուղեկցող մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

**Օգոստոսի 19-ին ժամը 14:00-ին տեղի կունենա բացման արարողությունը և վիճակահանությունը**
Հարցերի դեպքում զանգահարել՝ 099 440105

Գլխավոր մրցավար՝
միջազգային մրցավար Անուշավան Առաքելյան